ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«10» «հոկտեմբեր» 2022 թ. № 9-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 468-Ա ՀՐԱՄԱՆՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մայիսի 14-ի N 140-Լ հրամանի հավելվածի 19-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անհատական կազմը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հուլիսի 9-ի N 218-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 468-Ա հրամանը:

ՆԱԽԱՐԱՐ Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

1/10/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«10» հոկտեմբեր 2022թ.
ք. Երևան

Հավելված
Շրջակա միջավայրի նախարարի
2022 թվականի հունվարի « 10 »-ի
N 9 - Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ»
պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի

Գայանե Գաբրիելյան	շրջակա միջավայրի նախարարի տեղակալ, խորհրդի նախագահ,
Լուսինե Ավետիսյան	շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետ,
Ոսկեհատ Գրիգորյան	շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետ,
Արմինե Հովհաննիսյան	շրջակա միջավայրի նախարարության իրավաբանական վարչության պետի տեղակալ,
Կարեն Մնացականյան	շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ,
Շուշանիկ Ասմարյան	ՀՀ ԳԱԱ էկոկենտրոնի գիտության գծով փոխտնօրեն, աշխարհագրական տեղորոշիչ համակարգերի և հեռազննման բաժնի ղեկավար,
Քրիստինե Գուլանյան	շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավաբան (քարտուղար):